

մեն՝ տրամաբանությունը (Logics), իմացաբանությունը (Epistemology) եւ բնագանգությունը (Metaphysics):

Բարոյագիտութեան հիմնական հարցերը կը զբաղին կանոններով, որոնք կը հարթեն մարդկային վարմունքի ուղին: Այս իմաստով փիլիսոփայական բարոյագիտությունը պահանջք մը կը բարձրացնէ. անոր հետեւիլը կը նշանակէ՝ *բարոյական ճիշդ վարմունք*, որ ողջունելի է. իսկ անոր չհետեւիլը կը նշանակէ՝ *անբարոյական վարմունք*, որ դատապարտելի է: Այս իմաստով բարոյագիտությունը անհրաժեշտօրէն հարցադրումը կը կատարէ «ճիշդ ու բարի կեանքին», թէ՛ անհատի եւ թէ՛ ընկերութեան պարագաներուն. ան հարցադրումը կը կատարէ իւրաքանչիւր վարմունքի նպատակին, ջատագովելով *բարին*, որպէս կեանքի հիմնական սկզբունք:

Ինչպէս վերը յիշուեցաւ, գերման փիլիսոփայ Կանտ փիլիսոփայությունը կը բնորոշէ գլխաւոր չորս հարցադրումներով: Բարոյագիտությունը կը պատասխանէ երկրորդ հարցումին, «Ի՞նչ պէտք է ընեմ»ին:

Բարոյագիտությունը, որպէս փիլիսոփայական ճիւղ, կը փնտռէ պատասխանները այն հարցումին, թէ որոշ կացութեան մը մէջ ի՞նչ վարմունք պէտք է ունենալ. ահա այդ հարցումն է, որ Կանտ ամփոփած է պարզապէս «Ի՞նչ պէտք է ընեմ» արտայայտութեան մէջ: Վերոյիշեալ պատասխանները բարոյական կիրառելի կանոններ (սկզբունքներ, օրինակներ, նորմեր) են, որոնք կը թելադրեն որոշ վարմունքի (կամ վարուելակերպի) պատուէրներ, արտօնութիւններ կամ արգելքներ: Իսկ այդ բարոյական կիրառելի կանոններու «բոլորին կողմէ ընդունուած» ըլլալու հանգամանքը եւ անկէ յառաջացած հարցերը, մէկ խօսքով բարոյագիտութեան հիմնաւորման քննարկումն ու ան-կէ յառաջացած բանավեճերը ու լեզուական հարցերը կը կազմեն փիլիսոփայական բարոյագիտութեան կարեւոր մէկ բաժինը, որ նաեւ կը կոչուի՝ **մետա-բարոյագիտութիւն** (Meta-Ethics):

Փիլիսոփայական բարոյագիտութեան հիմնական 5 հարցադրումներն են.-

1. Ի՞նչ պէտք է ընեմ կամ ինչպէ՞ս պէտք է վարուիմ.
2. Ի՞նչ է բարոյական *ճիշդ* վարմունքը կամ ինչպէ՞ս պէտք է ճիշդ վարուիմ.
3. Ինչպէ՞ս կարելի է *հիմնաւորել* բարոյական վարմունքը.
4. Ի՞նչ է բարոյական վարմունքին *նպատակը* եւ
5. Ի՞նչ է բարոյական վարմունքին *հետեւանքը*:

Ինչպէս փիլիսոփայութեան մէջ, ընդհանրապէս, նաեւ բարոյագիտութեան պարագային կ'օգտագործուին որոշ հասկացութիւններ, զորս պէտք է յստակօրէն բնորոշել, կանխելու համար որեւէ թիրիմացութիւն. այս պատճառով, աշխատասիրութեանս վերջաւորութեան, առանձին մաս մը (տե՛ս Մաս 9, Էջ 367 – 527) յատկացուած է «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ»ուն:

Փիլիսոփայական բարոյագիտությունը, մակարդակային տեսակետէն, կարելի է բաժնել երեքի (տե՛ս Մաս 3, Էջ 126): Այստեղ, առանց մանրամասնութեան, պիտի թուեմ զանոնք.-